«Կամաւ այ (աստուծոյ) իշխանութիւն Ամիր Հասանա եւ Մաթէոս վդ կգնեցի զնշանս ինձ եւ Պետրոսո եւ ծն/ (մնացածը խաչի տակ)—ողաց իմոց որք / երկրպագէք ած / ողորմի նոց»։ Խաչի հորիզոնական թեւերից բարձր թվականն է. «Թ. ՉԻԴ»։ Ալիշան, ի հարկէ, սխալվում է, կարծելով թե թվականը «ՉԽԴ» պիտի լինի *։ Ցերկրորդ խաչքարն է 1279 թվականից, վոր հիշում է Զալալյան էլ, միայն սխալվում է այս թվականին նույնացնելով նույնանուն Որբելյանի հետ. արձանագրությունը թվագրված է Պոոշի և նորա վորդի Հասանի իշխանությամբ։ Մնացած արձանագրությունները ու հուշարձանները հետագա ժամանակին

հետ համաձայն է և Ալիշան *։ Հնում այստեղ էս Պոոշյանց կենդրոններից մեկն է յեղել, հավանորեն նրանց ազատներից մեկի սեպհականություն, բազմաթիվ հիշատակներից դատելով։ Դոցանից ամենից կարևորը և այժմ լավ պահպանվածը Գեոմյուրի մատուռն է յուր խաչարձանով, շինված 1263 թվին. խաչի յերեսն ուղղված է դեպի արևմուտք (եջ 48. պատկ. 12), ճակատին թվականն է, յերկու գարնեղների միացման անկյունում, իսկ բոլորաձև կամարի անկյունի վերա սկսվում է արձանագրությունը և շարունակվում խաչի շուրջը ձախից դեպի աջ (Հավելված Ա. 8)։ Խոյդանա վորդիքը Մխիթար և Արևիկ կանգնել են այս խաչն ու

Թանահատի մատուռի դրան կամարակալ քարը. **Պատկեր 47.**

են վերաբերում, վորոնց մասին կխոսենք հետևյալ գլխում**։

Մարտիրոսից քիչ դեպի արևելք Ցեաղյուրդ լերան հյուսիսային կողմը մի հրաշալի ձորակում գտնվում են Գեոմյուր և Գյաբրդ գյուղերը, Գեոմյուր գետակով միայն բաժանված. կոչվում են նաև Ներքին և Վերին Ախտա. առաջինը Զալալյանը նույնացնում է Հովսեփ յերեցի հայրենիք Հողոցիմ ավանի հետ. բայց Քաջբերունին շատ ավելի դեպի արևմուտք՝ Խաչիկ գյուղի մոտերքը՝ Ցեայիջի գյուղն է համարում այն, վորի

մատուռը, նոքա շինել են և յեկեղեցի, վոր մինչ այդ գյուղում չկար, ի հիշատակ իրենց և ամուսիններին։ Նույն իմաստով կրկնվում է արձանագրությունը և խաչի տակը։ Արձանագրությունները թվագրված են «ի բարեպաշտ իշխանութեն Պոոշո», «ի Թվ. Հ. ՉԺԲ. (=1263)». աջ կողմից, կամարի հիմք կազմող կիսախոյակի տակ «Մխիթար» և ապա «Շնորհոր աղբար», քարգործի անունն է արձանագրված։ Մարտիրոսի մեծ խաչքարի վերա (պատկ. 11. եջ 46) արդեն տեսանք հիշատակված նույն «Շնհավոր»-ի անունը։ Կեղծ կրկնակամարի տակ գրված է «որդի Մխիթարա», իսկ բուն խաչի գլխին, կամարակալ քարի վերա՝ «կազմեցաւ խաչս ի բարեխաւսութի Աւտարշահն թոռն Խոյդանայ»։ Կարծում ենք «որդի Մխիթարա» խոսքերը շարունա-

* Խաչքարի նույնատիպ պատկերը տպել է Strzygowski-ն. Die Baukunst der Arm. II. 721, շփոթմամբ լուսանկարը վերագրելով Թորամանյանցին, մինչդեռ մեզնից է ստացել։

** Զալալեան Բ. 200—202. Ալիշան. Սիսական 177.

* Զալ. Բ. 202. Քաջբերունի. Աշտարակ 1889. 447. Ալիշան. Սիսական 173. 177։